

աւազանի մը մէջ կը ձգեն , ու հոն կը թողուն 12 ժամ . յետոյ կը բանան , կը մաքրեն ու խեցիները կը յանձնեն մարգարիտ բացողներու որ պքցաններով մարգրիտները վրաներնէն կը փրցընեն :

Խեցիները դուրս հանելէն ետեւ ալ մարգրիտներուն շատը աւազանին տակը կը մնան աւազին մէջ . խեցիներուն մանր կտորուանքներուն հետ խառնուած . ասոնք զատելու համար՝ ստէպ ստէպ ջուրը կը փոխեն և պարկի մը մէջ կը լեցընեն . աւազն ալ լուալէն ու աղէկ մը չորցընելէն ետքը , մաղէ մը կ'անցընեն , աս կերպով մեծ մարգրիտները դիւրաւ կ'ելան , բայց պզտիկները զատելը՝ որ հարգրաի հոանս կ'ըսուին , քիչ մը աշխատարի է : Մարգարիտները զատելէն ետեւ իրենց խոշորութեանը համեմատ այլ և այլ դաս կը բաժնեն , ու դերձանի վրայ անցուցած վաճառքի կը հանեն :

Մարգրիտը ամէն ատեն յարգի զարդի տեղ գործածուած է . ասոր համար շատ հնարքներ բանեցուցած են անոր նմանցընելու . բայց ամենէն գլխաւոր հնարքը գտնուած է Կարմիր ծովին եղերքը շատ դարեր առաջ , որ ինչուան հիմա ալ շինացիք կը բանեցընեն : Գաղտակուրին խեցին երկըթէ թելով մը կը ծակեն , և նորէն իր տեղը կը դնեն . մէջի կենդանին ան թելով վիրաւորուելով , տեսակ մը մարգրտի հիւթ դուրս կուտայ , որ կամաց կամաց պնդանալով մարգարիտ կը ձևանայ և ան ատեն կը սկսին նորէն գաղտակուրը որսալ :

Սուտ կամ կեղծ մարգրիտը կը շինեն գոգաւոր ապակիէ գունտերով , որուն ներսի կողմը հեղանիւթով մը օծուած և ճերմակ մոմով լեցուցած է : Ըս գիւտը հնարեց Սաքէն Գաղղիացին անցեալ դարուն մէջ :

Հիմա Վ Էննայ կը շինեն աւելի նման սուտ մարգարիտներ , որոնց բաղադրութիւնն ալ բոլորովին տարբեր է առջինէն և կ'ըսուի Վ Էննայի հարգրիտ :

ԲՆԱԿԱՆ ԳՒՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Բոթոթաւոր օջ՝ .

ԹՈՒՆԱՒՈՐ և ֆնասակար օձերուն մէջ գլխաւորներէն մէկն է բոթոթաւոր օձը , որ Մեքսիկայի մէջ կը գտնուի : Բոթոթաւոր ըսուելուն պատճառը ան է որ՝ պոչին ծայրը բոթոթի՝ ձևով ոսկորներ ունի որ նման ձայն մը կը հանեն : Ըս օձին վրայ շատ առասպելներ կը պատմուին , որոնց պատճառը՝ ճանապարհորդներուն վեր ՚ի վերոյ ըրած քննութիւնն ու ժողովրդեան ամէն պատմած սուտումուտ բաներուն հաւտալն է : Մենք հոս ()տիւպոն անուանով իմաստուն Մեքսիկացւոյն մասնաւոր կերպով աս օձին վրայ ըրած քննութիւնները համառօտենք :

Բոթոթաւոր օձին գլխաւոր կերակուրը սկիւռ կենդանին է , որ Մեքսիկայի անտառներուն մէջ խիստ շատ կը գտնուի , որ թէպէտ և շատ աշխոյժ ու արագ կենդանի է , բայց չկրնար աս գաղանին ձեռքէն խալըսիլ , վասն զի ան ալ սաստիկ ճկուն ու արագ է : ()տիւպոն որ աչքով տեսեր է աս օձին որսին ետեւէն վազելն ու բռնել ուտելը , կ'ըսէ .
 “ Թուփի մը տակէն սկիւռ մը ելաւ , ու սկսաւ ամենայն արագութեամբ վա-

1 Լ . Crotalus. Գղ . Serpent à sonnette.

2 ՁԵՆԵՐԿԱՐԻ :

զել . անոր անցած ճամբուն վրայ բո-
ժոժաւոր օձ մը կար . երբոր ես աս եր-
կու կենդանիները տեսայ՝ սկիւռը քսան
քայլ մը օձէն առաջ էր , բայց աս միջո-
ցը խիստ շուտով պակսեցաւ . օձը այն-
պիսի արագութեամբ անցաւ քովէս որ
հագիւ թէ մէյմը կրցայ վրան նայիլ , ու
սկիւռին վրայ յարձրկեցաւ . բայց անի-
կայ ցատքեց ծառի մը վրայ ու ճանկելով
բարձր ճիւղերուն վրայ ելաւ , և սկսաւ
մէկ ճիւղէն մէկալը անցնիլ . սակայն
թշնամին՝ ուր ալ երթար ետեւէն կը
հասնէր , և չէր թողուր որ կտոր մը
հանգիստ առնու կամ փախչելու տեղ
մը գտնէ , և աս գործողութեան ատեն
երկուքին վրայ ալ վերջի աստիճանի ա-
րագաշարժութիւն կ'երեւնար , երբեմն
երբեմն սկիւռը այնպէս արագ կը ցատ-
քէր՝ որ աչքիս առջեւէն աներեւոյթ
կ'ըլլար , բայց ես օձին վրայ նայելով՝
մէկէն կ'իմանայի թէ սկիւռը որ ճիւղին
վրայ կեցեր է : Ճիւղէ ճիւղ անցնելու
համար՝ սկիւռը կեցած ճիւղին վրայ
պոչէն կը կախուէր , ու ճօճալով՝ աչքը
կտրելուն պէս՝ ուղած ճիւղին վրայ կը
նետուէր : Ինքզինքը պաշտպանել ու-
զելով , մտաւ ծակ բռնի մը մէջ , բայց
շուտով ելաւ անկից . վասն զի այնպիսի
նեղ միջոցի մէջ՝ չէր կրնար իր թշնա-
մոյն ձեռքէն խալըսիլ : Ա երջապէս
խեղճ կենդանին վախէն ու աշխատու-
թենէն հոգին բերանը դալով , ու ալ
կեցած ծառին վրայ վտանգէն խալըսե-
լու յոյս չունենալով , ինքը զինքը յուսա-
հատաբար ծառէն վար նետեց , հորիզո-
նական դրքով թաթերն ու պոչը գետնին
վրայ տարածելով , որպէս զի մէկ կեր-
պով մը իրեն վերջի տանջանքը աւելի
մեղմ ըլլայ : () Զոր անդադար անոր
ետեւէն կ'իյնար , մէկէն վրայ հասաւ , և
միջոց չտալով որ ուրիշ ծառի մը վրայ ել-
լայ , սկիւռին գլխին քովէն բռնեց ու այն-
պէս վրան պլուեցաւ որ ես խեղճ կեն-
դանոյն և ոչ մէկ կտորը կը տեսնայի ,
թէպէտ և ճուալու ձայնը կը լսէի : Ին-
միջապէս աս գործողութեան ատեն
զէպ 'ի օձը մօտեցայ՝ որպէս զի նայիմ
թէ ինչ պիտի ընէ սկիւռը . բայց անի-

կայ և ոչ իմացաւ իմ իրեն մօտենալս .
քանի մը վայրկեանէ ետքը քակուեցաւ
որսին վրայէն , և ինձի ամենեւին փնաս
չըրաւ , որով տեսայ որ սկիւռը մեռեր
էր . սակայն օձը աղէկ մը ստուգելու
համար թէ արդեօք մեռեր է որսը ,
խիստ հետաքրքրական փորձեր ըրաւ .
սկիւռին գլխին կողմը քանի մը բթա-
չափ գետնէն վեր վերցուց , ու ստէպ
գլուխը որսին դիակին վրայ կը պտըտ-
ցնէր ու կը դիտէր , միանգամայն ու-
տելու կը պատրաստուէր : Այս սկիւ-
ռին պոչէն սկսաւ , երկու ետեւի ոտուը-
ները ու գլուխը կլլելու համար նեղու-
թիւն քաշեց , բայց երբոր ան զժուա-
րութեան յաղթեց , կոկորդը այնպէս
ընդարձակեցաւ որ՝ որսին մնացած կտու-
րը առանց աշխատութեան լափեց , և
որսին բոլոր մարմինը քանի մը բթա-
չափ հեռաւորութեամբ օձին գլխին
ետեւ կեցաւ , և իրեն բնական մեծու-
թեան չափ ընդարձակեցաւ , անանկ որ
օձը որչափ ջանք կ'ընէր տեղէն չէր կրը-
նար շարժիլ . ան ատեն () տիւպոն փա-
ւազանով քանի մը անգամ գլխուն ին-
ջեցուց ու սպաննեց , և օձը ճղքելով՝
բացաւ տեսաւ որ սկիւռին վրան բոլո-
րովին ողորկուած էր , և էն բրդոտ տե-
ղուանքն ալ՝ և ոչ մազ մը մնացած էր :

Ի յոժոժաւոր օձը խիստ սրատես ըլ-
լալով՝ շատ բարձրէն կը տեսնէ անգրդ-
ները և բազէները , որ իրեն մեծ թըշ-
նամիներն են , ու երբոր անոնք կը սկը-
սին վար ինջնալ , ինքը վախէն թուփի ,
ծառի , կամ քարի մը տակ կը կծկի կը
կենայ ինչուան որ նորէն հեռանան :
Ատէպ կը դիտէ ծառերուն վրայ ինջած
թռչունները , չէ թէ զանոնք որսալու
մտքով՝ հապա անոնց հոնկէ հեռացած
ատենը իրենց ձագերը յափշտակելու
համար . և աս բանը շատ վարպետու-
թեամբ կ'ընէ , վասն զի թէ որ հոն ե-
ղած ատեննին ձագերուն վրայ յարձը-
կելու ըլլայ , անոնք զինքը տեսնելուն
պէս՝ մայրական գութէ շարժած կը
սկսին կանչուրուտել , ու հազարաւոր
թռչուն մէկէն հոն հասնելով՝ կատա-
ղաբար վրան կը թափին , ու անդադար

կտուց զարնելով հոգին բերանը կը բերեն : Բոժոժաւոր օձը , ինչպէս նաեւ աս տեսակ սողուններէն շատերը , ջրին մէջ երկայն ատեն կը կենան , ու շատ աղէկ կը լողան , և ինչ դիւրութեամբ որ ցամաքի վրայ իրենց որսը կը բռնեն , նոյն դիւրութեամբ նաեւ ջրին մէջ կը բռնեն :

() Երկայն ձմեռ ժամանակ քանի մը ընկերով որսի ելած ըլլալով , խիստ զարմանալի փորձով մը քններ տեսեր է աս տեսակ սողուններուն ան յատկութիւնը՝ որ ցրտէն բոլորովին կենդանական շարժմունքնին կը կորսնցնեն :

Արտորդութեան ժամանակ բոժոժաւոր օձ մը տեսեր են որ թմրած , պաղած , ու փայտի պէս կարծրացած է եղեր , առեր պարկին մէջ դրեր , ու ետքը մէկէն եկեր տաք կրակի քով նստեր են : Հազիւ թէ վրան կտոր մը ատեն անցեր է՝ տեսեր են որ ետեւի պարկին մէջ շարժմունք մը կայ , մէկէն վեր կը ցատքեն , որպէս զի նային թէ օձը նորէն կը կենդանանայ ինչ կ'ըլլայ . նոյն միջոցին պարկը յանկարծ հեռուն կը նետուի՝ և թմրած օձը մէջէն դուրս կ'ելլէ . և որովհետեւ սաստիկ ոլորուած է եղեր , կը սկսի գլուխը վեր վեր առնուլ , պոչին բոժոժներովը ձայներ հանել ու կ'ուզէ յարձրկիլ : Բայց կրակէն հեռացած ըլլալով , ցրտին սաստիկութենէն նորէն կը սկսի առջի վիճակը առնել ու թմրիլ : Բայց աս շատ անգամ կրակին քով մօտեցնելով ու նորէն անկից հեռացնելով՝ շատ փորձեր ընելէն ետքը , զինքը առեր օղիի տակաւի մը մէջ դրեր են , ու Երբ Երբի ճեմարանը տարեր են : Բայ տեսակ սողունները թմրելէն ետքը՝ ամենեւին կենդանական գործողութիւն մը ընելու կարողութիւն չեն ունենար , թէ որ որս մը կերած ատեննին յանկարծ ցուրտը կ'ոխէ , ան սննդաբար նիւթը՝ ինչուան անոնց ստամոքսին մէջ կը սառի , ու երբոր օդերը տաքնան , ան ատեն կենդանութիւննին վրայ կուգայ , ու կերակուրը կը մարսեն :

Բոժոժաւոր օձին , ինչպէս նաեւ բո-

լոր թունաւոր օձերուն ակռաները կատուի ճանկերուն պէս ներս դուրս կը խաղան : Բայ օձը իր երկայնութեանը երկուքին չափ հեռաւորութենէ՝ բերանը բացած թշնամոյն վրայ կը նետուի , ու խածած մնին մէջ թոյնը կը լեցնէ : Երբեք թէ ան աստիճան կատաղութեամբ կը յարձրկի՝ որ թէ որ մեծ տեսակը ըլլայ , ինչուան մարդ մը գետինը կը կործանէ : Երկունքներուն խածուածքը խիստ սուր ու խորունկ է , անանկ որ ոչ միայն զգեստը՝ հապա մէկը հաստ կաշի ալ հագած ըլլայ կը ծակէ կ'անցնի : Բայ խածուածքին ծայրը մահ է , թէ որ դարմանը ուշացուի . դարմանն ալ վիրաւորուած անդամը կը տրեխէ , և կտրած տեղը կրակով այրել : Երբ կը կարծէին թէ բոժոժաւոր օձին միսը՝ մի միայն դեղթափ է իրեն թոյնին դէմ . բայց աս բանիս սուտ ըլլալը իմացուեցաւ՝ երբոր տեսան որ բոժոժաւոր օձ մը ինքը զինքը խածած ըլլալով՝ չարաչար տանջանքով սատկեցաւ :

Բոժոժաւոր օձին մէկ գլխաւոր յատկութիւնն ալ ան է՝ որ ամիսներով , տարիներով առանց բան ուտելու կը դիմանայ , և իրեն ուժը , աշխոյժը և թոյնին զօրութիւնը ամենեւին չկորսնցնէր : Բայ թոյնը , որ երբեմն օձը շատ ոտնաչափ հեռուէն կը ցատքեցնէ՝ որչափ ալ քիչ ըլլայ , իրեն փաստակար յատկութիւնը տարիներով կը պահէ , ինչպէս որ ետեւի պատմութենէն յայտնի է : Պանդոկապետին մէկը իրեն խանութին ետեւը բոժոժաւոր օձէ մը զարնուեցաւ , որն որ կենացը մէջ ոչ լսեր և ոչ տեսեր էր : Բայց ակռային խայթուածքը անանկ տկար հանդիպեր էր , որ պանդոկապետը հազիւ թէ փուշի խայթուածին չափ ցաւ զգալով՝ անհոգ կեցաւ . վրան քանի մը ժամ անցնելէն ետեւ սաստիկ ցաւ զգալով ու սիրտը չարաչար ետ գալով ու փրփրալով մեռաւ : Երբ տարի մը անցաւ , իր որդին հօրը հողաթափները հագաւ , և իրիկունը հանելու ատեն՝ սրունքին վրայ ցաւ մը զգաց , և քանի դնաց ան աստիճան սաստկա-

ցաւ ցաւը՝ որ քունը բոլորովին փախաւ ,
ու չկրնարով օգնութիւն մը հասցնել
խեղճին՝ քիչ ատենէն մեռաւ : Եւ յոյն հո-
ղաթափները երբոր մեռնողին եղբայրը
հազաւ , ինքն ալ փնասուեցաւ , նախ
մորթը ուռեցաւ ու սկըղեցաւ , ետքը
սաստիկ ցաւեր զգարով՝ վերջապէս մե-
ռաւ : Եւ դիպուածը մեծ շփոթու-
թեան պատճառ եղաւ . վրայ հասաւ
բժիշկ մը , այլ և այլ հարցմունքներ
ըրաւ ու տեղեկութիւններ առաւ մեռ-
նողներուն հիւանդութեան վրայ . ու
երբոր ան մահառիթ հողաթափները
առջեւ դրին , սկսաւ ամենայն ուշա-
դրութեամբ քննել զանոնք , և տեսաւ
որ անոնցմէ մէկուն մէջ բոժոժաւոր օ-
ձի մը թիւնալից ակռան խրեր է եղեր
ու ծայրը վեր ցցուած կեցեր է , բայց
ոչ ոք տեսեր է : Հանեց ակռան հողա-
թափին մէջէն ու փորձելու համար թէ
արդեօք մեռնողներուն մահուան պատ-
ճառը իրաւցընէ ան է եղեր , նոյն ակ-
ռան շան մը ցուռկ խոթեց , որ քիչ ա-
տենէն ետքը սատկեցաւ :

Եւ ճամարիտ պատմութիւն կ'իմացուի
թէ խիստ չափազանցութիւն չէ նաեւ
անիկայ՝ որ կ'ըսեն թէ Եւֆրիկայի վայ-
րենի ազգերը իրենց նետերը բոժոժա-
ւոր օձին թոյնին մէջ թաթխելով՝ թոյ-
նին ուժը դարերով նետերուն վրայ կը
մնայ եղեր , և ով որ ան նետով զար-
նուի , թէպէտ և անփնաս տեղը , ճար
չկայ՝ կը մեռնի : Եւրոպացի բնախօս-
ներէն ոմանք կ'ըսեն թէ կինճերը մեծ
ջարդ կուտան բոժոժաւոր օձերուն ,
բայց () տիւպոն բնախօսը կը ջրէ ան
կարծիքը : Եւրոպաւոր օձը թռչուն-
ներ ալ կ'որսայ , բայց որսորդներուն
պէս համբերութեամբ երկայն ատեն
դարանելով և զարմանալի արագու-
թեամբ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վիպուած անախնէալ :

ՎԱՆԻ մը հողանտացի ճամբորդներ
թաթարստան ճամբայ ընելով՝ գտան
մեծ քարէ գերեզման մը որուն վրայ
գրած էր . Սեծ բաղդ կը գտնես՝ թէ
որ աս քարը շրջես : Սեծ յուսով աշխա-
տեցան քարը դարձուցին , բայց ինչպէս
պաղեցան՝ երբոր քարին այն կողմն ալ
գրած գտան , թէ այս առջի անգամը
չէ՝ որ յոյսդ պարապ ելեր է :

Ա Ռ Ա Կ

Ընդունի ծառը :

Ընդունի ծառին համար կը պատմեն
թէ առաջուց շատ բարձր չէր գետնէն ,
Անանկ որ ամէն ուզողն ալ կրնար
փրցնել պրտուզն ու անցնիլ երթալ :
Այս բանիս դրժարըն գալով ծառին
Ըսկըսաւ գանգատ ընել Վիոսին ,
Խնդրեց որ հասակն ալ բարձրացընէ :
Վիոս ալ ուզեց որ կամքը ընէ :
Գեղացիք առտուն ելեն տեսնեն որ ,
Կարճուկ ընկուզին բարձր հասակաւոր
Անտառներու մէջ մեծցած ծառի պէս
Ծայրն է հասուցեր երկինքը կարծես ,
Ու հըպարտացած գըլուխ շարժելով
Տերեւներն ալ է տուեր դէպ ի հով :
Բայց ուրախութիւնն երկայն չըբընց .
Գեղացին իր հին արհեստը յիշեց ,
Ձեռք հասնելու ճարն հառած տեսնելով
Ըսկըսաւ թափել քարով ու փայտով ,
Եւ այնչափ վեր վար զարկաւ ու կտորեց
Որ պրտուղ , տերեւ , ճիւղ՝ գետին փռուեց :
Խեղճ ընկուզենին խիստ ուշ իմացաւ :
Որ շատ բարձրանալն իրեն գէշ եղաւ :
Չարերէն կ'ուզեն որ ազատ մընաս . —
Շատ բարձրանալու ետեւ չըլտաս :